**ՏԵՂԵԿԱՆՔ**
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Հոդված 140. Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի պարտականությունները պատժից ազատվող դատապարտյալի աշխատանքը և կենցաղը կարգավորելու հարցերում**

1. Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը դատապարտյալի սոցիալական վերականգնման հարցերով համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ: Պատժից ազատելու նախապատրաստման նպատակով դատապարտյալի հետ նախապես անցկացվում են համապատասխան աշխատանքներ՝ Վերասոցիալականացման գնահատման հանձնաժողովի սահմանած կարգով:

2. Ազատազրկման ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան վեց ամիս առաջ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը՝

1) դատապարտյալի ընտրած բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմնին տեղեկացնում է դատապարտյալի՝ պատժից առաջիկա ազատման ժամկետի, նրա աշխատունակության, կրթության, մասնագիտության, ինչպես նաև բնակության վայրի առկայության մասին.

2) դատապարտյալին գրավոր և անհատապես ծանուցում է կազմակերպվող մասնագիտական ուսուցման ծրագրերում ընդգրկվելու իրավունքի մասին և ներկայացնում «Զբաղվածության մասին» օրենքով նախատեսված մասնագիտական ուսուցման ծրագրերը, ինչպես նաև նրանց տվյալները փոխանցում է օրենքով սահմանված լիազորված մարմին՝ որպես աշխատանք փնտրող անձ հաշվառելու և ~~զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի շրջանակներում կազմակերպվող~~ մասնագիտական ուսուցման ծրագրերում նրանց ընդգրկելու նպատակով:

3. Կենսաթոշակային տարիքի հասած, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող դատապարտյալի խնդրանքով քրեակատարողական հիմնարկի վարչակազմը նրա տվյալները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն՝ տարեցների կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքն ապահովող սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամք ապահովելու նպատակով: